



ԲԱԶՄԱՎԷՊ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 24 .

1851

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 .

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՅ

ԳԼՈՒԽ ԼԱ .

Լէռնութիւն :

ՄԻՇՏ արիութիւն . առանց ասոր
առաքինութիւն չկայ : Լէռնութիւն պէտք
է որ անձնահաճութեանդ յաղթես ու
բարեգործ ըլլաս . արիութիւն պէտք է
որ ծուլութեանդ յաղթես ու ամէն պա-
տուաւոր ջանքերուդ մէջ առաջ երթաս .
արիութիւն պէտք է որ հայրենիքդ
պաշտպանես ու տեղը գալուն պէս ո՞ր
և իցէ մարդու տէր կենաս . արիութիւն
պէտք է որ չար օրինակի ու անիրաւ
ճաղրածութեան դէմ դիմանաս . արիու-
թիւն պէտք է որ հիւանդութիւն ու
ամէն տեսակ վիշտ և նեղութիւն քա-
ջես՝ առանց վատ գանգատներու . ա-
րիութիւն պէտք է որ անդադար ետեւէ
ըլլաս այն կատարելութեան՝ որուն հաս-

նիլը կարելի բան չէ աս աշխարհիս վը-
րայ , բայց թէ որ հասնելու չաշխատինք ,
աւետարանին վսեմ իմաստին ըսածին
պէս՝ մեր ամէն ազնուութիւնը կը կոր-
սընցընենք :

Որչափ ալ սիրելի ըլլան քեզի քու
ժառանգութիւնդ , պատիւդ , կեանքդ ,
միշտ պատրաստ եղիր ամէնն ալ զոհե-
լու պարտքերուդ կատարմանը՝ թէ որ
այնպէս հարկ ըլլայ : Կամ ան է որ
մարդս աւելի յանձն պիտի առնէ աս
կերպով ինքզինքը ուրանալ , ու ամէն
երկրաւոր բարիքներէ հրաժարիլ՝ քան
թէ անոնց կապուելով անիրաւ ու ան-
զգամ ըլլալ . կամ ան է որ մարդս ոչ
միայն դիւցազն չէ , այլնաև հրէշ կրնայ

դառնալ. « Մասն զի ոչ երբեք կրնայ
 ,, մէկը արդար ըլլալ քանի որ մահու-
 ,, նէ, ցաւէ, աքսորանքէ, կարօտու-
 ,, թեան կը վախնայ, կամ թէ ասոնց
 ,, ներհակ եղած բաները արդարութե-
 ,, նէն վեր կը դնէ. » կ'ըսէ Արիստոն¹ :

Բնական բարեքներու վրայ չկա-
 պուած սրտով ասլիքը, ոմանց անանկ
 կ'երևնայ թէ խիստ վայրենի ու անգոր-
 ծադրելի խրատ է : Այս սակայն ճշմա-
 րիտը աս է որ ինչուան որ այն բարեք-
 ներուն վրայ անտարբեր աչքով մը չը-
 նայինք՝ ոչ ինչպէս որ պէտք է նէ ասլ-
 րիկ կը գիտնանք և ոչ մեւնիլ :

Արիութիւնը մարդուս սրտին ոյժ
 պիտի տայ ամենայն առաքինութեան
 ձեռք զարնելու . բայց նայէ որ չափը
 անցնելով յանդգնութիւն ու կատա-
 ղութիւն չգառնայ :

Բնոյնք որ կարծեն կամ կարծել կը
 ձեւացնեն թէ արիութիւնը հեզու-
 թեան հետ չկրնար յարմարիլ, անոնք
 որ վարժած են սանկ կ'ընեմ նանկ կ'ը-
 նեմ ըսելով մեծ մեծ ջարդելու, կռի-
 ընելու, խռովութեան ու արիւնհեզու-
 թեան ծարաւ ցուցնելու, 'ի չարն կը
 գործածեն այն սրտի ու ձեռքի ոյժն
 որ Բնութեամբ տուեր է իրենց մարդկային
 ընկերութեան օգտակար ու բարի օրի-
 նակ ըլլալու համար : Այս սովորաբար
 ծանր վտանգներու մէջ ասոնք աւելի
 վախկոտ կը գտնուին . իրենք զիրենք
 ազատելու համար կրնան ինչուան իրենց
 հայրն ու եղբայրները մատնել : Օրբի
 մը մէջէն ամենէն առաջ ձգող փախչող-
 ները անոնք են՝ որ իրենց ընկերներուն
 երեսին գոյնը նետած տեսնելով ծաղը
 կ'ընէին, ու թշնամոյն վրայ նախա-
 տական խօսքերով կը խրոխտային :

ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ

Այնպիսի վրայ համարում, և մեռնելու ա-
 րիւնքիւն :

ՇԱՏ զըբեր կան որ մարդուս բա-
 րոյակնան պարտքերուն վրայ շատ աւելի

1 Էղ. Պատշ. գիրք Բ. ԳԼ. Թ :

ընդարձակ ու փառաւոր կերպով կը խօ-
 սին . ես, ո՛վ պատանի, միտքս դրի որ
 քեզի պզտիկ դասատետոր մը ընծայեմ՝
 որ անոնք ամէնն ալ համառօտ կերպով
 մը միտքդ ձգեն :

Հիմա աս ալ աւելցնեմ որ այն պարտ-
 քերուն ծանրութեան պէտք չէ վախ-
 նանք . ծոյլ ու վատ մարդիկներուն միայն
 է որ անտանելի կ'երևնան : Անք յօ-
 ժարութիւն ունենանք աղէկ ըլլալու,
 կը տեսնենք որ ամենայն պարտուց մէջ
 գաղտնի գեղեցիկութիւն մը կայ որ ըզ-
 մեզ կը հրաւիրէ զինքը սիրելու . կ'իմա
 նանք որ զարմանալի զօրութեամբ մը
 ուժերնիս կ'աւելնայ՝ քանի որ առաքի-
 նութեան խորտուբորտ ճամբուն մէջ
 առաջ երթանք . կը հասկընանք որ
 մարդս ինչ որ կը կարծուի անկէց շատ
 աւելի է, միայն թէ ուզէ, ու զօրաւոր
 կերպով ուզէ իր վախճանին բարձր նը-
 պատակին հասնիլ, որ է ամենայն ա-
 նարդ յօժարութիւններէ մաքրուիլ, ա-
 ղէկները վերջի աստիճանի ջանքով 'ի
 գործ դնել, և աս կերպով արժանի ըլլալ
 յաւիտեան ժառանգելու զԲնութեամբ :

Արիէ կեանքդ . բայց անոր համար
 մի սիրեր որ հասարակ հեշտութիւններ
 ու խեղճ փառասիրութիւններ վայելես :
 Արիէ կեանքդ՝ մէջը եղած հարկաւոր,
 մեծ և ստտուածային բաներուն հա-
 մար : Արիէ կեանքդ, վասն զի առաքի-
 նութեան ասպարէզ մըն է՝ Բնութեամբ
 սիրելի, Բնութեամբ փառացը պատճառ .
 մեզի ալ փառաց և օգուտներու պատ-
 ճառ : Արիէ կեանքդ, թէպէտ և շատ
 վշտեր ալ ունենայ, մանաւանդ թէ այն
 վշտերուն համար ալ, վասն զի անոնք
 են որ մարդուս կեանքը կ'ազնուացնեն,
 անոնք են որ կը բողբոջեն, կ'աճեցնեն
 ու պողպատ կ'ընեն մարդուս հոգոյն
 մէջ վեհանձնական մտածութիւններն
 ու ընտիր ընտիր յօժարութիւնները :

Բն կեանքս որ այնչափ համարում
 պիտի ունենաս վրան՝ մի մոռնար որ քիչ
 ատենի համար տրուած է քեզի : Այլ
 որ չափազանց զուարճութիւններու չը-
 մրսիես : Բնչափ ուրախութիւն միայն
 ըրէ, որչափ որ հարկաւոր է քու ա-

ուղղութեանդ և ուրիշի միութարու-
թեանը համար : Ս'անաւանդ թէ քու
ուրախութիւնդ մասնաւոր կերպով քու
պարտքերդ լաւ կատարելուն վրայ ըլ-
լայ . որ են՝ ուրիշներուն վեհանախան
եղբայրութեամբ ծառայել , Լ'ստուծոյ
որդիական սիրով ու հնազանդութեամբ
ծառայել :

Ս'երջապէս աս կերպով կեանքդ սի-
րէ , բայց գերեզմանդ ալ մտածէ որ քե-
զի կը սպասէ : Ս'եռնելու հարկը մտա-
ծել չուզելը՝ աղէկ ըլլալու ջանքին փաս-
կ'ընէ : Զրլայ թէ քու յանցանքովդ
այն ահաւոր վայրկեանը շուտով հաս-
ցընես . բայց միանգամայն չըլլայ թէ
վատութեան համար ուղես անիկայ
քեզմէ հեռու բռնել : Կեանքդ դիր ու-
րիշներուն փրկութեանը համար , թէ
որ հարկաւոր է , մանաւանդ հայրե-
նեացդ փրկութեանը համար : Ի՛նչ տե-
սակ մահ ալ պահուած ըլլայ քեզի՝
պատրաստ եղիր քաջութեամբ ընդու-
նելու և հաւատոյ ամենայն սրբութիւն
և ուժովը սուրբ մահ ընելու :

Լ'յս ամենայն խրատներս պահելով
կ'ըլլաս իրաւցրնէ ընտիր մարդ , ընտիր
քաղաքացի , աս բառերուն ամենավսեմ
իմաստներուն նշանակութեանը պէս .
օգտակար կ'ըլլաս ուրիշներուն , ու ինք-
զինքդ երջանիկ կ'ընես :

ՓԷ՛ԼԼԻԲՈՅ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Թ .

Խնչից՝ Լրայ :

ԻՆՉՔԸ Խարտարութեան արուես-
տական գործիքներէն մէկն է . և ինչ-
պէս որ գեղեցիկ կը զուրցէ Ուստի .
“Տէրութեանց զրեթէ նիւթական
կեանքը , ու անոնց քաղաքականութեան

ու զարգացման չափն է , — Ինչք ըսե-
լով կ'իմացունին ո՛ր և իցէ ստացուածք՝ որ
գործառուի մը նոր բերք հանելու հա-
մար կը ծառայեն . ուստի շէնքերը ,
գործիքները , կենդանիները , մեքենա-
ները , ստակը , և այլն , ամէնքն ալ ինչք
են : Խնչից դրամական մասը դրամա-
գլուխ կ'ըսուի , իսկ բոլոր ընչից տեղ
նոյն բառը գործածելը մեծ սխալ է ու
չփութութիւն . վասն զի գործառու մը
քիչ դրամագլխով կրնայ մեծ բանի ձեռք
զարնել՝ թէ որ նոյն բանին պէտք ե-
ղածին չափ ինչք ունենայ . զոր օրինակ
թէ որ մէկը հանք մը բանեցընելու հա-
մար՝ մետաղները հանելու , մաքրելու
գտելու հարկաւոր եղած մեքենաները
ու գործիքները ունենայ , որ շատ բան
ըսել է , կրնայ չափաւոր կամ քիչ դրա-
մագլխով նոյն գործողութեան ձեռք
զարնել . վասն զի պէտք եղած ընչից
գլխաւոր մասը ունի , որ են մեքենանե-
րը . իսկ մէկալ մասը , այսինքն դրամա-
գլուխը աշխատաւորաց թոշակը վճարե-
լու և պատահական ծախքերը ընելու
համար է միայն : — Իայց զարմանք չէ ,
(մանաւանդ մեր մէջը , որ ինչուան հի-
մա դրամագլուխ բառը գործածուե-
րէ ,) որ սովորական խօսակցութեան
մէջ հասարակ ժողովուրդը ինչք ըսե-
լով ստակեղէն միայն կը հասկընայ .
վասն զի միշտ մէկու մը ընչից ճիշտ չա-
փը իմանալու համար ստրկի կը վերա-
ծենք ունեցածը . թէ որ մէկը երկու
տուն , հինգ արտավար երկիր , տասը
բեռան կենդանի , մէկ շտեմարան՝ ունե-
նայ , ոչ միայն ուրիշը , այլ և ոչ տէրը
իր ընչիցը աժէքին չափը ստոյգ կրնայ
գիտնալ . բայց թէ որ անոնց աժէքը
ստկի վրայ աւնենք , այսինքն երկու
տունը 100,000 ղուրուշ դնենք , հինգ
արտավարը 50,000 ղուրուշ , տասը կեն-
դանին 8,000 ղուրուշ , շտեմարանն ալ
60,000 ղուրուշ . ըսել է թէ մարդուն
ընչիցը աժէքը 218,000 ղուրուշ է :
Դարձեալ թէ որ մէկը ուղենայ անոնիկ
գործքի մը ձեռք զարնել որ հաստա-
տուն ինչքը իր գործքին չի կարենայ
ծառայել , պէտք է որ զանոնք ծախէ ու